ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 07.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/62

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.10.2017թ. թիվ 04/26-3/17958-17 գրությամբ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև՝ Պատվիրատու) 27.09.2017թ. թիվ 22/08.1.6-911 գրության հիման վրա, 04.10.2017թ. թիվ 04/26-3/17958-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Մաքս-Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 05.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/18008-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին (այսուհետև՝ Ընկերություն):

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը գրությամբ հայտնել է հետևյալ է, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն մասնակցել է «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին: Պատվիրատուն 21.07.2017թ ժ. 11:00-ի թիվ 2 արձանագրությամբ անհիմն մերժել է Ընկերության կողմից ներկայացված հայտը, ընթացակարգը հայտարարելով չկայացած, ինչի կապակցությամբ Ընկերությունը 31.07.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել է բողոք, որը 15.08.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/25 որոշմամբ բավարարվել է: Նույն օրը ԳԲԽ-ԱՄ-2017/25 որոշումը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում:

Այնուհետև, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումից 6 օր անց՝ 21.08.2017թ. Պատվիրատուն թիվ 3 արձանագրությամբ հաղթող մասնակից է ճանաչել ընկերությանը:

Սակայն «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1-1» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) կնքվել է միայն 15.09.2017թ՝ այսինքն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 15.08.2017թ. կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/25 որոշումից ուղիղ մեկ ամիս անց:

Ընկերությունը հայտնել է, որ պայմանագրով ծառայությունների ներկայացման վերջնաժամկետ է նախատեսվել 22.09.2017թ., և ըստ Պատվիրատուի 22.09.2017թ. թիվ 22/08.1.6-883 գրության՝ Պայմանագրով նախատեսված լուսանկարների տպագրությունը և ցուցադրությունը կազմակերպվելու է 2017թ. սեպտեմբերի 25-ին համալսարան պաշտոնական պատվիրակության այցի համար:

Ընկերությունը հայտնել է, որ նման պայմաններում ավելի, քան անհասկանալի է 15.08.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-ԱՄ-2017/25 որոշման ընդունումից հետո նման ժամկետով սահմանափակված պայմանագրի կնքման ձգձգումը Պատվիրատուի կողմից ավելի, քան մեկ ամսով, և արդյունքում Պայմանագիրը պատվիրատուն կնքել է 15.09.2017թ., իսկ վերջնաժամկետ սահմանել 22.09.2017թ.:

Պայմանագրի 7.7-րդ կետի համաձայն՝ ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետ լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացվի ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 30 օրացույցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրի սահմանված ժամկետն է:

Հիմք ընդունելով պայմանագրի 7.7-րդ կետը՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 20.09.2017թ. թիվ 80/1/42 գրությամբ, որը Պատվիրատուն ստացել է նույնպես 20.09.2017թ., առաջարկել է երկարաձգել ծառայության մատուցման ժամկետը:

Պատվիրատուն, չպատասխանելով նշված առաջարկությանը, երկու օր անց՝ Պայմանագրի ժամկետը լրանալու օրը, Ընկերությանն ուղղված 22.09.2017թ. թիվ 22/08.1.6-883 գրությամբ միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Պայմանագրի 2.2.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերությունների հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

Նույն պայմանագրի 3.1-րդ կետի համաձայն՝ մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր

կողմից ստորագրված ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձման-ընդունման արձանագրությունը (հավելված 3): Ընդ որում, Կատարողը հանձման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի 3.2-րդ կետի համաձայն՝ եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 3.3-րդ կետի համաձայն՝ եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.1 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրում նախատեսված պատասխանատվության միջոցները:

Նույն պայմանագրի 3.4-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային

օրը՝ Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ պայմանագրով Ընկերությանը 15.09.2017թ. տրամադրվել են ալբոմներ, ժուրնալ, լուսանկարներ և էլեկտրոնային կրիչի վրա նկարներ, որոնք Ընկերությունը ենթարկել է համակարգչային մշակման՝ բարձր որակի սկանավորում, չափերի համապատասխանեցում, ինչպես նաև տեխնիկական բնութագրով պահանջվածից ավելին՝ հին նկարների վնասված հատվածների ուղղում:

17.09.2017թ.-ին համակարգչային մշակման ենթարկված լուսանկարների մի մասը, Գ. Մուրադյանի պահանջով՝ նկարների գնահատման համար, ուղարկվել են Պատվիրատուի կողմից տրամադրված էլ. փոստին:

18.09.2017թ.-ին նույն էլեկտրոնային հասցեով ուղարկվել է համակարգչային մշակման ենթարկված Պատվիրատուի կողմից տրամադրված մնացաց լուսանկարները և նյութը ուղարկվել է տպագրության:

18.09.2017թ.-ին Գ. Մուրադյանը հայտնել է, որ իրենց հարմար չէ էլեկտրոնային եղանակով ուսումնասիրել նկարները և խնդրել, որպեսզի նկարները տպագրվեն թղթի վրա և ներկայացվեն իրենց:

19.09.2017թ.-ին «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարի 18.07.2017 թ. 356-Ն հրամանի համապատասխան՝ պայմանագրի մի մասի կատարման արդյունքները հանձնման-ընդունման նպատակով, պատվիրատուին է տրամադրել ՊԲՀ նյութի վրա տպագրված և տեխնիկական բնութագրին համապատասխանող 2 լուսանկար: Սակայն գնահատող հանձնաժողովը բանավոր եզրահանգման հիման վրա նկարները համարել է տեխնիկական բնութագրին անհամապատասխան /պատճառաբանելով, որ պետք է նկարում առկա մարդկանց դեմքից բնականից առկա կորեակը հեռացվեր, դեմքի գույնը փոխեր և այլն, և չի թույլատրել նկարները սահմանված կարգով փակցնել, ինչպես նաև չի տրամադրել բացասական եզրակացություն և հրաժարվել է ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

Նույն օրը թղթային տարբերակով բոլոր լուսանկարները տրամադրվել են Պատվիրատուին, որոնցից մի քանիսը ուսումնասիրելուց հետո՝ Պատվիրատուն պատասխանել է, որ բոլոր նկարները անհամապատասխան են:

19.09.2017թ.-ին Գ. Մուրադյանի հետ հեռախոսով Ընկերությունը պայմանավորվել է, որ 20.09.2017թ.-ին Ընկերության մասնագետները անձամբ գնան Պատվիրատուի մոտ և փորձեն հասկանալ, թե ինչը չի համապատասխանում տեխնիկական բնութագրին: Երկար սպասելուց ու քննարկելուց հետո պարզ է դարձել, որ Պատվիրատուն շատ անգամ ավելին է ուզում, քան Պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագիրն է, և Պայմանագրով նախատեսված ժամանակում անհնարինը: Ընկերությունը 20.09.2017թ.-ին մեկ անգամ ևս պահանջել է Պայմանագրով սահմանված կարգով ընդունել նկարները և թույլատրել սահմանված կարգով դրանք փակցնել, սակայն կրկին անգամ չի թույլատրվել նկարները սահմանված կարգով փակցնել, ինչպես նաև չի տրամադրվել բացասական եզրակացություն, ասելով, որ Ընկերությունը դիմի պռորեկտոր Ա. Թամրազյանին, վերջինն էլ խոստացել է ուղարկել բացասական եզրակացություն, սակայն մինչ օրս Ընկերությունը եզրակացություն չի ստացել:

Ընկերութունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.2.1-րդ կետը՝ թե էլեկտրոնային և թե թղթային եղանակով Պատվիրատուի քննարկմանն է ներկայացրել մատուցված ծառայության արդյունքը: Իսկ Պատվիրատուն, Պայմանագրի 2.2.1-րդ կետի համաձայն, պարտավոր էր քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերությունների հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

Սակայն Պատվիրատուն, խախտելով Պայմանագրի 2.2.1-րդ կետով սահմանված պահանջը, ոչ ընդունել է Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, ոչ էլ իբրև թե թերություններ հայտնաբերելիս՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Ընկերությանը:

Պայմանագրի արդյունքը հանձնելու հետ միաժամանակ, ղեկավարվելով պայմանագրի 3.1-րդ կետի պահանջներով, «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն բազմաթիվ անգամ փորձել է Պատվիրատուին հանձնել ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսող իր կողմից ստորագրած փաստաթուղթը, սակայն փորձերը եղել են ապարդյուն, քանզի Պատվիրատուն բանավոր հրաժարվել է վերցնել այդ փաստաթուղթը:

Բացի այդ, ղեկավարվելով պայմանագրի 3.1-րդ կետի պահանջներով, «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ փորձել է նաև ներկայացնել հանձման-ընդունման արձանագրությունը (հավելված 3): Սակայն կայքում համապատասխան կոճակի ոչ ակտիվ լինելու պատճառով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն զրկվել է նաև էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով հանձման-ընդունման արձանագրությունը ներկայացնելու հնարավորությունից (ընկերությունը պատրաստ է խորհրդի նիստի ընթացքում armeps համակարգի նշված խնդիրը ներկայացնի համակարգչի միջոցով)»:

Ընկերությունը հայտնել է, որ նշված փաստական հանգամանքների պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել են Պայմանագրի 3.1-3.4-րդ կետերը, քանզի Պատվիրատուն չի ընդունել ծառայությունը և չի վերցրել ու ստորագրել ծառայությունը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով հանձման-ընդունման արձանագրությունը ներկայացնելու հնարավորությունն էլ անհասկանալի սահմանափակված է), ոչ էլ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին ներկայացրել բացասական եզրակացություն հանձնված ծառայության վերաբերյալ:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն թույլ չի տվել 2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում և խնդրել է Խորհրդին «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 10.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Խորհրդի որոշմամբ նիստը հետաձգվել է՝ հաջորդ նիստին Ընկերության ներկայությունը ապահովելու նպատակով:

Ընկերությունը 27.10.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ խնդրել է 3 աշխատանքային օրով հետաձգել 27.10.2017թ. կայանալիք նիստը, քանի որ սույն գործով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի շահերը ներկայացնելու համար ներգրավված իրավաբանական ընկերության փաստաբանները կարիք ունեն ծանոթանալու գործի նյութերին և ներկայացնելու մասնագիտական դիրքորոշում:

Խորհուրդը բավարարել է Ընկերության միջնորդությունը՝ հաջորդ նիստը նշանակելով 31.10.2017թ.-ին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.10.2017թ. ժամը 11:30-ի, 27.10.2017թ. ժամը 12:00-ի և 31.10.2017թ. ժամը 15:30-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ հայտնած դիրքորոշումը:

3. <u>«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական Համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմանդրամը 27.09.2017թ. թիվ 22/08.1.6-911 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, ի պատասխան «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՍՑ-ԱՄ-2017/62 պաշտոնական ընթացակարգի հիմքերի վերաբերյալ դիրքորոշման, 03.11.2017թ. թիվ 22/08.1.6-1046 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշման ա/ կետով նշված ժամկետներին վերաբերող հարցադրումների մասով վերջիններս պահպանված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ թույլատրված ժամկետների տիրույթում:

Պատվիրատուն հայտնել է, որ ուշադրության է արժանի հատկապես Պայմանագրի կքման օրվա և Պայմանագրի կատարման վերջնաժամկետի պահպանված լինելու

հանգամանքը: Մասնավորապես՝ եթե ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստին, որը տեղի է ունեցել ս.թ. հուլիսի 21-ին, «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն ճանաչվեր ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից, ապա կիրառելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված հայտերի բացման, գնահատման, ամփոփման և պայմանագրի կնքման վերաբերյալ ամենասեղմ ժամկետները, պայմանագիրը «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի հետ կարող էր կնքվել միայն ս.թ. օգոստոսի 8-ին և որի կատարման վերջնաժամկետն էր armeps.am համակարգով հրապարակված 15.08.2017թ.-ը: Այսինքն Պայմանագրի կատարման համար սահմանված ժամկետը՝ ներառյալ պայմանագրի կնքման և կատարման օրերը, կազմում է 8 օր՝ և այդ պայմանին համաձայն լինելով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն մասնակցել է ընթացակարգին: Բողոքարկման գործընթացից հետո կնքված Պայմանագրի ժամկետը սահմանվել է 8 օր՝ դրանով իսկ Պատվիրատուն պահպանել է ի սկզբանե սահմանված պայմանը, որը վերաբերում էր բոլոր հնարավոր մասնակիցներին:

Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշման բ/ կետով նշված Պայմանագրի կատարման ժամկետի երկարաձգմանը վերաբերող հարցադրումների մասով Պատվիրատուն հայտնել է, որ Պատվիրատուին ուղղված «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ս.թ. սեպտեմբերի 20-ի թիվ 80/1/42 գրությանը պատասխան գրություն է ուղարկվել անմիջապես հաջորդ աշխատանքային օրը /սեպտեմբերի 21-ը ոչ աշխատանքային օր է/, որով միակողմանի լուծվել է Պայմանագիրը, քանի որ Պատվիրատուի մոտ 24.09.2017թ. վերանում էր ծառայության օգտագործման պահանջը, իսկ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից վերը նշված գրությամբ Պայմանագիր կատարման երկարաձգման ժամկետ էր առաջարկվել Պայմանագրի կատարման սկզբնական ժամկետի չափով:

Դիրքորոշման գ/ կետով նշված հարցադրումների մասով Պատվիրատուն հայտնել է, որ Պայմանագրին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց հավելվածով, որպես ծառայություն նշվել է ամբողջական 400 հատ լուսանկարների լուսանկարչական և օժանդակ ծառայությունները՝ առանց տարանջատելու միավորի գնի և ընդհանուր գնի, քանի որ ելնելով ծառայության առանձնահատկությունից դա անհնար է, ինչպես

անհնար է սահմանել թե 400 հատ լուսանկարից՝ օրինակ առաջին 4 հատը ինչ կարժենա մնացած 396 հատը ինչ կարժենա: Նշված և ծառայության առանձնահատկություններով պայմանավորված բազմաթիվ այլ պատճառներով ծառայությունը սահմանվել է որպես մեկ ամբողջական միավոր 400 հատ լուսանկարների համար: «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն ծառայությունը ամբողջական չի ներկայացրել, դրանով իսկ հնարավորություն չտալով Պատվիրատուին գնահատել արդյոք ծառայությունը մատուցվել է թերություններով թե ոչ և որպես հետևանք հնարավորություն չտալով ընդունել կամ պատճառաբանված մերժել ծառայության արդյունքը: Պատվիրատուն հայտնել է, որ ուշագրավ է նաև այն, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն ըստ իր ներկայացրած գրությամբ պայմանագրի ժամկետի երկարացման հանգամանքն ուղղակիորեն պայմանավորել է ավելի բարձր որակի նկարներ տպագրել, ինչն էլ ուղղակիորեն վկայում է այն մասին, որ պայմանագրով նախատեսված որակին համապատասխան նկարներ չեն պատրաստվել: Պատվիրատուն հայտնել է, որ նշվածից ակնհայտ է դառնում, որ ներկայացված առարկությունները չեն համապատասխանում իրականությանը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 10.10.2017թ. ժամը 11:00-ի, 12.10.2017թ. ժամը 11:30-ի, 27.10.2017թ. ժամը 12:00-ի և 31.10.2017թ. ժամը 15:30-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/62 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/62 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ «Լուսանկարչական և օժանդակ ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ էր ներկայացրել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.07.2017թ ժ. 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ մերժել է Ընկերության կողմից ներկայացված հայտը, ընթացակարգը հայտարարելով չկայացած:

3. Ընկերությունը 31.07.2017թ. << գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել է բողոք, որը 15.08.2017թ. Խորհրդի կողմից կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/25 որոշմամբ բավարարվել է:

4. Խորհրդի կողմից 15.08.2017թ. կայացված ԳԲԽ-ԱՄ-2017/25 որոշումը 15.08.2017թ. հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ հիմք ընդունելով Խորհրդի ԳԲԽ-ԱՄ-2017/25 որոշումը և հաշվի առնելով, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, որոշել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին կայանալիք բանակցությունների օրվա, ժամի և վայրի մասին, որը տեղի կունենա ս.թ. օգոստոսի 28-ին ժամը 11:00-ին:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ հաշվի առնելով, այն որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից բանակցության ժամանակ նվազեցված գնային առաջարկը չի գերազանցում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, ուստի «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին ճանաչել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին ճանաչել է հաղթող մասնակից:

8. «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի և «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի միջև 15.09.2017թ. կնքվել է

«ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1-1 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր:

9. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն) ստանձնում է լուսանկարչական և օժանդակ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

10. Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

11. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել 22.09.2017թ.:

1. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

12. Պայմանագրի 2-րդ կետի 2.2.1 ենթակետի համաձայն՝ ***Պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:***

13. Պայմանագրի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝

նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձման-ընդունման արձանագրությունը (հավելված 3): Ընդ որում, Կատարողը հանձման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

14. Պայմանագրի 3-րդ կետի 3.2 ենթակետի համաձայն՝ եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

15. Պայմանագրի 3-րդ կետի 3.3 ենթակետի համաձայն՝ ***եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.1 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:*** Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրում նախատեսված պատասխանատվության միջոցները:

16. Պայմանագրի 3-րդ կետի 3.4 ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը:

17. Պատվիրատուն 23.09.2017թ. 15 սեպտեմբերի 2017թ. N ՀՊՄՀ-ԳՀՇՁԲ-17/1-1 պայմանագիրը միակողմանի լուծելու ծանուցմամբ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին հայտնել է, որ Կատարող հանդիսացող «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն չի կատարել պայմանագրի 1.1 և 1.2 կետերով ստանձնած իր պայմանագրային արտավորությունները պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով նախատեսված կարգով և սահմանված ժամկետներում, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ Պատվիրատուի մոտ նշված ծառայությունների ձեռքբերման պահանջը վերացել է և պայմանագրի գործողության ժամկետը չի կարող երկարաձգվել 7.7 կետով սահմանված կարգով, ուստի կիրառելով պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետով ամրագրված Պատվիրատուի իրավունքը՝ որոշել է միակողմանի լուծել պայմանագիրը:

18. Ընկերության ներկայացուցիչները ՍՑ-ԱՄ-2017/62 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված նիստի ժամանակ հայտնել են, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.2.1-րդ կետը՝ Ընկերությունը փորձել է թե էլեկտրոնային և թե թղթային եղանակով Պատվիրատուի քննարկմանը ներկայացնել ծառայությունը, ինչպես նաև Պատվիրատուին ծառայությունը հանձնելու փաստը ֆիքսող իր կողմից ստորագրած փաստաթուղթը, սակայն փորձերը եղել են ապարդյուն, քանի որ Պատվիրատուն չի ընդունել ծառայությունը և չի վերցրել ու ստորագրել ծառայությունը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և ոչ էլ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է ներկայացրել բացասական եզրակացություն հանձնված ծառայության վերաբերյալ, այնինչ Պատվիրատուն Պայմանագրի 2.2.1-րդ կետի համաձայն, պարտավոր էր քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ

ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

19. Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչները նիստի ժամանակ հայտնել են, որ Պայմանագրին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, որպես ծառայություն նշված է ամբողջական 400 հատ լուսանկարների լուսանկարչական և օժանդակ ծառայությունները՝ առանց տարանջատելու միավորի գնի և ընդհանուր գնի, քանի որ ելնելով ծառայության առանձնահատկությունից դա անհնար է, ինչպես անհնար է սահմանել թե 400 հատ լուսանկարից՝ օրինակ առաջին 4 հատը ինչ կարժենա մնացած 396 հատը ինչ կարժենա: Նշված և ծառայության առանձնահատկություններով պայմանավորված բազմաթիվ այլ պատճառներով ծառայությունը սահմանվել է որպես մեկ ամբողջական միավոր 400 հատ լուսանկարների համար: «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն ծառայությունը ամբողջական չի ներկայացրել, դրանով իսկ հնարավորություն չտալով Պատվիրատուին գնահատել արդյոք ծառայությունը մատուցվել է թերություններով թե ոչ և որպես հետևանք հնարավորություն չտալով ընդունել կամ պատճառաբանված մերժել ծառայության արդյունքը:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.10.2017թ. թիվ 04/26-3/17958-17 գրությունը, «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի 27.09.2017թ. թիվ 22/08.1.6-911 և 03.11.2017թ. թիվ 22/08.1.6-1046 գրությունները՝ կից փաստաթղթերով, «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից 31.10.2017թ. ներկայացված դիրքորոշումը, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ

մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Այսպիսով, «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ «Լուսանկարչական և օժանդակ ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.07.2017թ ժ. 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ մերժել է Ընկերության կողմից ներկայացված հայտը, ընթացակարգը հայտարարելով չկայացած:

Ընկերությունը 31.07.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել է բողոք, որը 15.08.2017թ. Խորհրդի կողմից կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/25 որոշմամբ բավարարվել է:

Խորհրդի կողմից 15.08.2017թ. կայացված ԳԲԽ-ԱՄ-2017/25 որոշումը 15.08.2017թ. հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ հիմք ընդունելով Խորհրդի ԳԲԽ-ԱՄ-2017/25 որոշումը և հաշվի առնելով, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, ուստի մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին կայանալիք բանակցությունների օրվա, ժամի և վայրի մասին, որը տեղի կունենա ս.թ. օգոստոսի 28-ին ժամը 11:00-ին:

Պատվիրատուն 25.08.2017թ. Ընկերությանն ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ հաշվի առնելով այն որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար անհրաժեշտ է կազմակերպել գնի նվազեցման բանակցություններ, որը տեղի կունենա ս.թ. օգոստոսի 28-ին ժամը 11:00-ին՝ կից ներկայացնելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա», «բ», «գ» և «ե» պարբերությունների համաձայն՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում ***հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում*** գնահատող ***հանձնաժողովի քարտուղարը*** բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ***ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,***

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ ***աշխատանքային օրը***:

Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***21.08.2017թ.*** ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ հիմք ընդունելով Խորհրդի ԳԲԽ-ԱՄ-2017/25 որոշումը և հաշվի առնելով, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, որոշել է ***մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին կայանալիք բանակցությունների օրվա, ժամի և վայրի մասին***, որը տեղի կունենա ս.թ. օգոստոսի 28-ին ժամը 11:00-ին, մինչդեռ Պատվիրատուն հանձնաժողովի նիստը կասեցրել է օգոստոսի 21-ին, սակայն օգոստոսի 28-ին կայանալիք բանակցությունների վերաբերյալ Ընկերությանը ծանուցել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ ոչ թե մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այլ՝ 4-րդ աշխատանքային օրը՝ օգոստոսի 25-ին, ինչպես նաև Պատվիրատուն չի պահպանել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված պահանջը, քանի որ Ընկերությանը ծանուցել է օգոստոսի 25-ին և բանակցությունները վարել է օգոստոսի 28-ին՝ այսինքն հաջորդ աշխատանքային օրը, մինչդեռ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության

համաձայն՝ բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից ***երկրորդ աշխատանքային օրը***:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված ***բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը***՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից ***մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:***

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 15.08.2017թ. կայացված և 15.08.2017թ. տեղեկագրում հրապարակված թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/25 որոշումից 4 աշխատանքային օր անց Պատվիրատուն 21.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է Ընկերությանը գների նվազեցման շուրջ 28.08.2017թ. կանչել բանակցությունների, մինչդեռ Պայմանագրով ծառայությունների ներկայացման վերջնաժամկետ է նախատեսվել 22.09.2017թ., այլ կերպ ասած Պատվիրատուն արհեստականորեն ձգձգել է Պայմանագրի կնքման ժամկետը, արդյունքում «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի և «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի միջև «ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1-1 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը կնքվել է 15.09.2017թ.-ին: Արհեստականորեն պայմանագրի կատարման համար հնարավորինս կարճ ժամկետ սահմանելով՝ Պատվիրատուի գործողությունները հաստատվում է նաև այն հանգամանքով, որ Պատվիրատուն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն Ընկերությանն է ուղարկել 14.09.2017թ. և Պայմանագրի կատարման վերջնաժամկետ սահմանել 22.09.2017թ., մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ընտրված մասնակիցը պայմանագիրը կարող է կնքել պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, տվյալ դեպքում Ընկերության կողմից պայմանագրի կնքումը կարող էր կատարվել 28.09.2017թ-ին:

Այսպիսով, Պատվիրատուի կողմից պայմանագրի կնքման համար սահմանվել է ավելի կարճ ժամկետ, քան Ընկերությունը վերոհիշյալ օրենքի դրույթների համաձայն կարող էր կնքել պայմանագիրը:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն) ստանձնում է լուսանկարչական և օժանդակ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել 22.09.2017թ.:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 2-րդ կետի 2.2.1 ենթակետի համաձայն՝ ***Պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:***

Պայմանագրի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձման-ընդունման արձանագրությունը (հավելված 3): Ընդ որում, Կատարողը հանձման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի 3-րդ կետի 3.2 ենթակետի համաձայն՝ եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 3-րդ կետի 3.3 ենթակետի համաձայն՝ ***եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.1 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:*** Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված

միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրում նախատեսված պատասխանատվության միջոցները:

Ընկերության ներկայացուցիչները ՍՑ-ԱՄ-2017/62 պաշտոնական ընթացակարգով տեղի ունեցած նիստի ժամանակ, ինչպես նաև 31.10.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել են, որ 15.09.2017թ. Ընկերությանը տրամադրվել են ալբոմներ, ժուրնալ, լուսանկարներ և էլեկտրոնային կրիչի վրա նկարներ, որոնք Ընկերությունը ենթարկել է համակարգչային մշակման (բարձր որակի սկանավորում, չափերի համապատասխանեցում), ինչպես նաև իրականացրել է տեխնիկական բնութագրով պահանջվածից ավելին՝ հին նկարների վնասված հատվածների ուղղում:

17.09.2017թ. համակարգչային մշակման ենթարկված լուսանկարների մի մասը, Գ. Մուրադյանի պահանջով՝ նկարների գնահատման համար, ուղարկվել են Պատվիրատուի կողմից տրամադրված էլ. փոստին:

18.09.2017թ. նույն էլեկտրոնային հասցեով ուղարկվել է համակարգչային մշակման ենթարկված Պատվիրատուի կողմից տրամադրված մնացած լուսանկարները և նյութը ուղարկվել է տպագրության:

18.09.2017թ.-ին Գ. Մուրադյանը հայտնել է, որ իրենց հարմար չէ էլեկտրոնային եղանակով ուսումնասիրել նկարները և խնդրել, որպեսզի նկարները տպագրվեն թղթի վրա և ներկայացվեն իրենց:

19.09.2017թ. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարի 18.07.2017 թ. 356-Ն հրամանի համապատասխան՝ պայմանագրի մի մասի կատարման արդյունքները հանձնման-ընդունման նպատակով, պատվիրատուին է տրամադրել ՊԲՀ նյութի վրա տպագրված և տեխնիկական բնութագրին համապատասխանող 2 լուսանկար: Սակայն գնահատող հանձնաժողովը բանավոր եզրահանգման հիման վրա նկարները համարել է տեխնիկական բնութագրին անհամապատասխան /պատճառաբանելով, որ պետք է նկարում առկա մարդկանց դեմքից բնականից առկա կորեակը հեռացվեր, դեմքի գույնը փոխվեր և այլն, և չի թույլատրել Ընկերությանը նկարները սահմանված կարգով փակցնել, ինչպես նաև չի տրամադրել բացասական եզրակացություն և հրաժարվել է ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

Նիստի ժամանակ Խորհուրդն արձանագրել է, որ Ընկերությունը այդ երկու նկարները միակողմանի ստորագրած հանձնման-ընդունման ակտի հետ միասին Պատվիրատուին է հանձնել այն նպատակով, որ եթե դրանք Պատվիրատուն ընդունի, ապա Ընկերությունը կարող է մի քանի ժամվա ընթացքում տպել և ներկայացնել նկարների մնացած մասը, այսինքն՝ 398 հատը, սակայն Պատվիրատուն չի ընդունել Ընկերության կողմից ներկայացված նկարները, միևնույն ժամանակ Պայմանագրի 3-րդ կետի 3.3 ենթակետի համաձայն չի տրամադրել բացասական եզրակացություն, այլ բանավոր եզրահանգման հիման վրա դրանք համարել է տեխնիկական բնութագրին անհամապատասխան:

Ընկերությունը հայտնել է նաև, որ 20.09.2017թ.-ին մեկ անգամ ևս Ընկերությունը պահանջել է, որպեսզի Պատվիրատուն Պայմանագրով սահմանված կարգով ընդունի նկարները և թույլատրի դրանք փակցնել, սակայն կրկին անգամ Պատվիրատուն չի թույլատրել Ընկերությանը նկարները սահմանված կարգով փակցնել, ինչպես նաև չի տրամադրել բացասական եզրակացություն, ասելով, որ Ընկերությունը դիմի պռորեկտոր Ա. Թամրազյանին, վերջինն էլ իր հերթին խոստացել է ուղարկել բացասական եզրակացություն, սակայն մինչ օրս Պատվիրատուի կողմից եզրակացություն չի տրամադրվել Ընկերությանը:

Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչները ՍՑ-ԱՄ-2017/62 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված նիստի ժամանակ հայտնել են, որ Պայմանագրին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, որպես ծառայություն նշված է ամբողջական 400 հատ լուսանկարների լուսանկարչական և օժանդակ ծառայությունները՝ առանց տարանջատելու միավորի գնի և ընդհանուր գնի, քանի որ ելնելով ծառայության առանձնահատկությունից դա անհնար է, ինչպես անհնար է սահմանել թե 400 հատ լուսանկարից՝ օրինակ առաջին 4 հատը ինչ կարժենա մնացած 396 հատը ինչ կարժենա: Նշված և ծառայության առանձնահատկություններով պայմանավորված բազմաթիվ այլ պատճառներով ծառայությունը սահմանվել է որպես մեկ ամբողջական միավոր 400 հատ լուսանկարների համար: «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն ծառայությունը ամբողջական չի ներկայացրել, դրանով իսկ հնարավորություն չտալով Պատվիրատուին գնահատել արդյոք ծառայությունը մատուցվել է թերություններով թե ոչ

և որպես հետևանք հնարավորություն չտալով ընդունել կամ պատճառաբանված մերժել ծառայության արդյունքը:

Այսպիսով, Պայմանագրի 3-րդ կետի 3.2 ենթակետի համաձայն՝ ***եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն*** պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ***Կատարողին է փրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:***

Պայմանագրի 2-րդ կետի 2.2.1 ենթակետի համաձայն՝ ***Պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին <u>անհապաղ գրավոր հայտնել Կատարողին</u>:***

Պայմանագրի 3-րդ կետի 3.3 ենթակետի համաձայն՝ ***եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին,*** ապա ***Պատվիրատուն չի ստորագրում հանձման-ընդունման արձանագրությունը և*** պայմանագրի 3.1 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ***Կատարողին հետ է վերադարձնում հանձման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած <u>բացասական եզրակացությունը</u>:***

Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Պայմանագրի 2-րդ կետի 2.2.1 ենթակետով, 3-րդ կետի 3.2, 3.3 և 3.4-րդ ենթակետերով սահմանված պահանջները, քանի որ Պատվիրատուն Պայմանագրով սահմանված վերը նշված կետերի համաձայն պարտավոր էր Ընկերության կողմից ներկայացված նկարներում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտներ Կատարողին և հետ վերադարձներ հանձման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը, մինչդեռ Պատվիրատուն Ընկերության կողմից 19.09.2017թ. փորձնական ներկայացված

2 լուսանկարները բանավոր եզրահանգման հիման վրա համարել է տեխնիկական բնութագրին անհամապատասխան և ի վերջո, չտալով բացասական եզրակացություն 23.09.2017թ. Ընկերությանն ուղղված ծանուցմամբ լուծել է 15.09.2017թ. կնքված N ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-17/1-1 ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն, չտալով բացասական եզրակացություն, փաստացի զրկել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին Պայմանագրով նախատեսված պարտականությունների հետագա կատարման հնարավորությունից, ուստի նման փաստական հանգամանքներում Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 04.10.2017թ. թիվ 04/26-3/17958-17 գրությամբ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 09801955) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ